ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 259-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 248-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և հիմք ընդունելովՀայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 09.09.2025 թվականի թիվ 119-Ա որոշումը, որոշում եմ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 28 օգոստոսի 2025 թվականի «Արենի համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերը համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին» թիվ 248-Ա որոշումը:

2. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 16-րդ փողոց 5 հասցեում գտնվող 0.40127 հա (ծածկագիր 10-008-0041-0019 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը և շինությունները (կաթսայատուն, կոյուղու մաքրման կայան, թվով 4 պարիսպ, հարթակ)՝ անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման

իրավունքով տրամադրել «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

3. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ռինդ բնակավայրի 14-րդ փողոց 23 հասցեում գտնվող 0.3574 հա (ծածկագիր 10-037-0026-0018 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

4. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի 1-ին փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող 0.587 հա (ծածկագիր 10-004-0013-0011 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

5. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի 1-ին փողոց 3 հասցեում գտնվող 0.265 հա (ծածկագիր 10-012-0021-0025 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**